ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Արարատի մարզի Շաղափի Լ. Ղազարյանի անվան միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի ռուսաց լեզու (23 դասաժամ), քիմիա (8 դասաժամ), անգլերեն (11 դասաժամ), ՆԶՊ (4 դասաժամ), հանրահաշիվ (4 դասաժամ), երկրաչափություն (3 դասաժամ), տեխնոլոգիա (2 դասաժամ՝ տղաների խումբ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է / Ձև 1 /
2. Փաստաթուղթ / դիպլոմ/ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճեն,
4. Ինքնակենսագրություն / Ձև 4 /,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները / դրանց առկայության դեպքում /
6. Մեկ լուսանկար 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հասաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք ,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00}—ից 15^{00}—ը, բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 17-ին ժամը 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի Շաղափի Լ. Ղազարյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Շաղափ, Արարատյան 15:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 74-64-09 հեռախոսահամարով:

ՀՎՀՀ կոդ-04103996